ՀՏԴ 941(479.243:479.25)

Պատմություն

Ռուբեն ԳԱԼՉՅԱՆ
քարտեզագետ, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր
E-mail: rgalichian@yahoo.com

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՐՑԱԽԸ ՕՏԱՐՆԵՐԻ ՔԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ ԵՎ 1918-2021թթ. ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հոդվածում քննվում են օտարերկրյա քարտեզագրողների կողմից ստեղծված քարտեզներում «Արցախ / Ղարաբաղ» անվանումների գործածությունների ժամանակագրությունը և գործոնները:

Հատկանշելի է, որ խորհրդային իշխանության շրջանում Խորհրդային Հայաստանի և Արցախի տարածքի տարբեր հատվածներ՝ սկսած 1921 թվականից և ավելի ուշ, աստիճանաբար փոխանցվեցին Ադրբեջանին: 1926 թվականին, ինչպես հաստատվում է խորհրդային պաշտոնական քարտեզներով, արևելքում Հայաստանն ու Արցախն ունեին ընդհանուր սահմաններ՝ բաժանված միայն Աղավնո գետով, իսկ մի քանի տարի անց Ադրբեջանը յուրացրեց ավելի քան 1500 քառ. կմ հայկական և արցախյան հողեր, ինչը հանգեցրեց նրանց միմյանցից անջատման և հայկական հողերի զավթման:

Հոդվածում նկարագրվում են ադրբեջանցիների պահանջների պատճառները և Մոսկվայի՝ հող հանձնելու համաձայնությունը առանց բազմաթիվ գործոնների պատշաճ հաշվառման:

Р. Галчян

АРМЕНИЯ И АРЦАХ В ИНОСТРАННЫХ КАРТАХ И ВОПРОСЫ ГРАНИЦ В 1918-2021 ГГ

В статье объясняется, как и когда название Арцах (Карабах) появилось на картах, созданных иностранными картографами, и продолжало появляться на протяжении многих веков.

Исследуется также период советской власти, показывая, как и когда различные части территории Советской Армении и Арцаха, начиная с 1921 года и позже, были постепенно переданы Азербайджану. В 1926 году, как подтверждают официальные советские карты, на востоке Армения и Арцах имели общие границы, разделенные только рекой Агавно, а несколько лет спустя Азербайджан присвоил более 1500 кв. км. армянских и арцахских

земель, что привело к их отделению друг от друга и захвату армянских земель.
В статье описываются причины претензий азербайджанцев и согласия Москвы на передачу земель без должного учета многих факторов.

R. Galchian

ARMENIA AND ARTSAKH IN OTHERS' MAPS AND BORDER ISSUES DURING 1918-2021

The paper explains how and when the name of Artsakh (Karabakh) appeared on the maps prepared by foreign cartographers and continued to do so for many centuries.
It continues to the sovietisation of the region, showing how and when various parts of the territory of Soviet Armenia and Artsakh were gradually handed over to Azerbaijan, starting from 1921 and thereafter. In 1926, as confirmed by the official Soviet maps, in the east Armenia and Artsakh had common borders, being separated only by the Aghavno River, while a few years later Azerbaijan appropriated over 1500 sq. km. of Armenian and Artsakh lands, resulting in the separation them from each other and taking over of Armenian lands.
The paper goes on describing the reasons of Azerbaijanis claims and Moscow's approvals, for these land transfers, done without due consideration to many factors.

Սույն հոդվածն առաջին անգամ զեկուցման ձևով ներկայացվել է 2021 թ. սեպտեմբեր 20-ին, Արցախում կայացած գիտաժողովում:

Առաջին անգամ հայ աշխարհագրական գրականության մեջ *Արցախ* անվանումը օգտագործվել է 7-րդ դարի *Աշխարհացույցի* մեջ, ուր ներկայացված են Արցախի և նրան հարակից տարածքների անվանումները:

Տե՛ս պատկեր 01.



Պատկեր 01. 7-րդ դարի Աշխարհացույցի ձեռագրում նշված Արցախի և շրջակա տարածքների անվանումները:

Ղարաբաղ անվանումն առաջին անգամ եվրոպական քարտեզների մեջ երևացել է 1460 թ. Վենետիկում պատրաստված Ֆռա Մաուրո վանականի *Աշխարհացույց* մեծադիր քարտեզի մեջ, ուր հարավը քարտեզի վերևումն է: Սա քարտեզի Միջին Արևելքի հատվածն է, ուր մի քանի տեղ նշված է *Հայաստան* (*Armenia)* անունը, Հայաստանի, Մեծ Հայքի և հայկական Կիլիկիայի թագավորության տարածքների վրա: Սրանք մեր կողմից ընդգծված են կարմիր գույնով: Նշված են նաև Արարատ լեռն ու նրա վրա իջած Նոյյան Տապանը՝ ընդգծված կապույտ գույնով: Իսկ Արարատից արևելք կանաչով ընդգծվածը նշում է *Ղարաբաղի Լեռներ* անվանումը, տե՛ս պատկեր 02,



Պատկեր 02. 1460 թ. Հարավային Կովկասի մասը Վենետիկի քարտեզագետ Ֆռա Մաուրոյի Աշխարհացույցից, ուր բացի Հայաստանից, առաջին անգամ արևմտյան քարտեզագրության մեջ նշված է նաև Ղարաբաղի անունը:

Հաջորդը անգլիացի Մոդենի 1680 թ. Հարավային Կովկասի քարտեզն է, որտեղ նշված է Ղարաբաղը՝ տարածված Կուրի և Արաքսի խառնարանից մինչև Սևանա լիճը:

Պատկեր 03. Հարավային Կովկասը Մորդենի 1680 թ. քարտեզում, ուր ներկա է Ղարաբաղը

Գերմանացի քարտեզագետ Կիպերտը տարիներ ով բնակվել է Օսմանյան կայսրության և Պարսկաստանի տարածքում և իր 1844 թ. քարտեզում պատկերել Հայաստանը և Պարսկական Ատրպատական նահանգը: Այս քարտեզում Հայաստանը տարածվում է Խարբերդից մինչև Սևան, իսկ Ղարաբաղը նրա արևելքում է և հասնում է մինչև Կուր գետը: Իրանի Ատրպատական նահանգը, ինչպես նաև Ղարադաղը տեղադրված են Արաքսից հարավ և ընդգծված են կապույտ գույնով: Արաքսից հյուսիս Ադրբեջան անունով տարածք գոյություն չունի (տե՛ս պատկեր 04):



Պատկեր 04 . Գերմանացի քարտեզագետ Կիպերտի 1844-ի քարտեզից. Հայաստանի և Պարսկական Ատրպատական նահանգի քարտեզը:

Միրզա Ջամալ Ջավանշիր Ղարաբաղին տարածաշրջանի հանրահայտ պատմաբաններից էր, ով 1845 թ. շարադրել է Ղարաբաղի պատմությունը՝ վերնագրված *Ղարաբաղ-նամե*: Քանի որ այդ ժամանակ տարածքի իշխող լեզուն՝ թուրքերենը, դեռ գրավոր տարբերակ չուներ, ուստի բոլոր պաշտոնական գրությունները պարսկերեն էին շարադրվում: *Ղարաբաղ-նամեն* էլ բացառություն չէ և գրված է պարսկերեն, որի 4-րդ էջի վերևի հատվածը վերարտադրված է 05 պատկերում:



Պատկեր 05. Հատված պատմաբան Միրզա Ջավանշիր Ղարաբաղիի 1845 թ. «Ղարաբաղի պատմությունը» ձեռագրից, որը պահվում է Ադրբեջանի գիտությունների ակադեմիայում:

Ընդգծված տեքստը նշում է հետևյալը.

Ղարաբաղում կառուցված առաջին քաղաքը Պարտավ բերդաքաղաքն էր, որը գտնվում է Թարթառ գետի վրա, Կուրից 3 փարսանգ հեռու: Քաղաքի բնակչությունն անցյալում հայեր էին և մի քանի այլ ազգություններ:

Նույն գիրքն այժմ տառադարձվել է լատինատառ ադրբեջաներենի, որի տեքստից ամբողջովին հանված է վերջին նախադասությունը: Տառադաձված գրքում հանված է ոչ միայն այս նախադասությունը. ամբողջ գրքում հանված են բոլոր *հայ* և *Հայաստան* անունները, որոնք փոխվել են *աղվան-ի* և *Աղվանք-ի*: (տե՛ս պատկեր 05 և Ռ. Գալչյան, *Ադրբեջանական պատմաաշխարհագրական գեղծարարությունները*, «Զանգակ», 2017 թ., էջ 48-53 և 235):

Տառադարձումը Ադրբեջանի «գիտնականների» և իշխանությունների համար շատ կարևոր զենք է, քանի որ ներկա սերունդներն իրենց նախնիների բնագրերն անկարող են կարդալ, իսկ տառադարձման ընթացքում կատարվում են «բարեփոխումներ» և «ուղղումներ»՝ այդպիսով «արդիականացված» տեքստերը վերածելով «իրականության», ինչպես նաև օգտագործելով որպես քարոզչության միջոց:

1901 թ. անգլիացի հետազոտող Լինչը, այցելելով Արևմտահայաստան և Արևելահայաստան, հրատարակեց իր երկու հատոր *Ճամփորդություններ Հայաստանում* գիրքը, որոնց կից էր երկու Հայաստանների ամբողջական

քարտեզը: Պատկեր 06-ի հատվածը վերցված է այդ քարտեզից, ուր առկա են Ղարաբաղը և Դաշտային Ղարաբաղը՝ տարածված Սևանից մինչև Արաքսի և Կուրի խառնարանը, որոնք ներկայացվում են որպես Հայաստանի մասը:

Պատկեր 06. Հարավային Կովկասը Լինչի 1901 թ. քարտեզից, ուր ցուցադրված են նաև Լեռնային և Դաշտային Ղարաբաղները:

Երբ Հայաստանի առաջին Հանրապետությունը 1920 թ. իր հսկողության տակ եղած տարածքները հանձնեց Խորհրդային Ռուսաստանին, Հայաստանը զբաղեցնում էր այն տարածքը, ինչ ցույց է տրված պատկեր 07-ում: Այսօր Ադրբեջանի Հանրապետության իշխանությունները պնդում են, որ իրենք Ադրբեջանի առաջին Հանրապետության սահմաններն են ժառանգել: Եթե այդպես է, ապա Հայաստանին պետք է վերադարձվեն այն տարածքները, որոնք ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոն 1921 թ. հանձնեց Ադրբեջանին, այսինքն՝ Նախիջևանը, Քաշաթաղն ու Քարվաճառը, ինչպես նաև ներկա Լեռնային Ղարաբաղի տարածքը, որոնք Խորհրդային Ադրբեջանն ստացավ 1921 թ. վերոնշյալ որոշմամբ:



Պատկեր 07. Խորհրդայնացված Հայաստանի տարածքը,1920 թ.:

Պատկեր 08-ի քարտեզում կապույտով շրջանակված են այն տարածքները, որոնք Ստալինի կարգադրությամբ և ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի որոշումով 1921 թ. հուլիսին հանձնվեցին Խորհրդային Ադրբեջանի Հանրապետությանը:



Պատկեր 08 . Կապույտով շրջանակված տարածքները, որոնք գտնվում էին Խորհրդային Հայաստանի վերահսկողության տակ, սակայն Ստալինի որոշումով 1921 թ. հուլիսին հանձնվեցին նորաստեղծ Խորհրդային Ադրբեջանին:

1926-47 թթ. հրատարակվեց *Սովետական Մեծ Հանրագիտարանը* (առաջին հրատարակություն), որի 3-րդ հատորում տեղադրված է *Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության* քարտեզը: Այս փաստաթուղթը, որն առանց պետական վավերացման չէր կարող տպագրվել, ցույց է տալիս, որ Ալ լՃերը, Իշխանասարը, Շուռնուխը և նրա շրջակայքը, Կապանի ներկայիս օդանավակայանի տարածքը և այլն, գտնվում են Հայաստանի սահմաններից ներս: Իսկ Հայաստանում որևէ ադրբեջանական անկլավ գոյություն չունի: Քարտեզում Հայաստանն ու ԼՂԻՄ-ի (Արցախի) տարածքները իրար են կպած, բաժանված լինելով միայն Աղավնո գետով (տե՛ս պատ. 09, դեղին սլաքով նշվածը):

Պատկեր 09. Խորհրդային Հայաստանի քարտեզը 1926 թ. Սովետական մեծ հանրագիտարանում, ուր դեռևս Հայաստանի ու Արցախի տարածքները իրար են կպած:

Նույնը կարելի է տեսնել Հայաստանում 1926-ի մարդահամարից հետո 1927 թ. հրատարակված քարտեզում (պատկեր 10), ուր նաև Արծվաշենը պարանոցով միացած է Հայաստանին և նրա մասնիկն է կազմում: Իսկ Շուռնուխն ամբողջովին Հայաստանի սահմաններից ներս է գտնվում, սահմանից ավելի քան երկու կիլոմետր արևմուտք:

Պատկեր 10. Հայաստանի տարածքը 1927 թ., երբ Արծվաշենը, Ալ լաֆերը, Կապանի ներկայիս օդանավակայանի և Գորիսից Կապան ճանապարհի տարածքը Հայաստանի սահմաններում են:

Պատկեր 11-ում կապույտով նշվածը Խորհրդային Հայաստանի ու ԼՂԻՄ-ի (Արցախի) այն տարածքներն են, որոնք Ադրբեջանը ապօրինի կերպով՝ Կարմիր Քրդստան գավառը հիմնելու կամ այլ պատրվակով, բռնազավթեց, բայց գավառը չեղարկվելուց հետո դրանք յուրացրեց: Իսկ ժամանակի իշխանությունները մնացին պասիվ:

Պատկեր 11. Կապույտով նշված են Խորհրդային Հայաստանից և Արցախից Ադրբեջանի բռնագրաված տարածքները:



Պատկեր 12 . 1923-1936 թթ. ստեղծվեցին երեք ադրբեջանական անկլավներ Խորհրդային Հայաստանում և մեկ հայկականը՝ Խորհրդային Ադրբեջանում: Ադրբեջանի անկլավները հիմնականում տեղադրված են Հայաստանի մայրուղիների վրա՝ ուղղակի նպատակ ունենալով դրանց հսկողությունը հանձնել Ադրբեջանին: Իսկ Արծվաշեն հայկական անկլավը

գտնվում է Ադրբեջանի մի խուլ անկյունում և չունի որևէ ռազմավարական կարևորություն:



Պատկեր 13ա, 13բ. Արծվաշենը 1927 թվականին և Արծվաշենի անկլավը 1930-ականներից հետո:

Ադրբեջանը, տիրանալով Արծվաշենի պարանոցին, Հայաստանին տվել է մի տարածք, որը ոչ մի ռազմավարական կարևորություն չունի: Սակայն Հայաստանում գտնվող Ադրբեջանի անկլավները, տեղադրված լինելով հայկական մայրուղիների վրա, ունեն հսկայական ռազմավարական կարևորություն:

Պատկեր 14-ը ցույց է տալիս որ *Տիգրանաշեն* (նախկին *Քյարքի*) անկլավը կարող է փակել Երևանից Եղեգնաձոր, Գորիս, Արցախ և Իրան տանող մայրուղին, քանի որ անկլավը շրջանցող գյուղամիջյան ճանապարհը մեծ ավտոբուսների ու բեռնատարների համար անօգտագործելի է:



Պատկեր 14 . Տիգրանաշեն (նախկին Քյարքի) անկլավը, որը տեղադրված է Երևան-Գորիս-Արցախ-Իրան ճանապարհի վրա:

Պատկեր 15-ը նշում է Տավուշում տեղադրված երկու ադրբեջանական անկլավները՝ *Բարխուդարլուն* և *Ասկիպարան*՝ ընդգծված կարմիր գույնով: *Բարխուդարլուն* ուղղակի «նստած» է Իջևան-Ղազախ մայրուղու վրա, իսկ *Ասկիպարան* մայրուղին չի հատում, սակայն նրա մոտով անցնող Ադրբեջանին տրված երկու սեպաձև անբնակելի տարածքները այնպես են գծված, որ հայկական Իջևան-Թբիլիսի մայրուղին չորս անգամ սահմանը հատում է՝ անցնելով Ադրբեջանի տարածքով: Այս դրվածքը նման է Գորիս-Կապան մայրուղու վիճակին: Այսինքն՝ ըստ ԽՍՀՄ իշխանությունների որոշման՝ Հայաստանի մայրուղիներն անպայման անցնում են Ադրբեջանի տարածքով՝ դառնալով նրանց կողմից վերահսկելի:



Պատկեր 15. Ադրբեջան-Հայաստան սահման՝ մոխրագույն, անկլավների սահման՝ կարմիր, իսկ տրամաբանական սահմանը գետի ափով անցնող կանաչն է: Դեղինը հայաստանյան մայրուղին է:



Պատ.16 . Գորիսից Կապան տանող խորհրդային մայրուղին, որն ավելի քան ութ անգամ հատում է Ադրբեջանի սահմանը՝ անցնելով մեկ երկրից մյուսը:

Կապույտ սլաքները նշում են այն կետերը, ուր Հայաստանի մայրուղին հատում է Ադրբեջանի սահմանը:

Այսօր մենք ժառանգել ենք ԽՍՀՄ-ի կենտրոնական իշխանությունների գծած անտրամաբանական սահմանները և ճանապարհները՝ գծած իրենց հայեցողությամբ, առանց նկատի առնելու տեղաբնակ ժողովուրդների բաժանումներն ու ապրուստի պայմանները:

Ահա Խորհրդային Միության քարտեզագրության գլուխ գործոցը, որի հետևանքները տեսնում ենք մեր օրերում:

Խորհրդային իշխանություններն ունեին կարգ, որը մինչ այսօր գործադրվում է. դա այն է, որ տեղագրական մանրակրկիտ քարտեզները գաղտնի են և հասարակության համար անհասանելի: Դա ղեկավարությանը թույլ էր տալիս թաքցնել խնդիր առաջացնող սահմանները և հանրության համար տպագրված քարտեզներից հանել կամ քարտեզում«ուղղել» իրականությունը:

Այսպես, հանրությանը հասանելի բոլոր քարտեզներում Գորիսից Կապան մայրուղին ամբողջովին անցնում է Հայաստանի տարածքով: Մինչդեռ նույն ժամանակ պատրաստված զինվորական շտաբի մանրակրկիտ քարտեզներում կարելի է տեսնել իրականությունը: Պատկեր 16-ը վերցված է զինվորական շտաբի գաղտնի քարտեզից, որը հետաքրքրվողների համար հասանելի է համացանցում, իսկ պատկեր 17-ը նույն ճանապարհի «նորմալացված» տարբերակն է, ուր ճանապարհն ամբողջովին Հայաստանի տարածքումն է:

Այս սահմանափակումը դեռևս գործադրվում է, որի փաստական դրսևորումներից է 2015 թ. անգլերենով հրատարակված *Հայաստանի ազգային ատլասը*:

Պատկեր 17. Գորիսից Կապան ճանապարհի հատվածն ըստ 1961-ին հրատարակված Հայաստանի ատլասի հանրամատչելի խորհրդային քարտեզի, որն իրականությունը չի ներկայացնում:



Պատկեր 18 . Ալ լճերի տարածքը, որը 1929 թ. տրվել է Ադրբեջանին, կից քարտեզով և կարգադրությամբ:

Ադրբեջանական սահմանը սևով է գծված, որի կարմիր ներկված մասը Անդրկովկասյան Դաշնությունը հանել է ու փոխարինել դեղինով գծված սահմանով, որի արդյունքում Ադրբեջանին է տրվել 20,000 հեկտար արոտավայր, դաշտեր, լճեր ու անտառ:

Տեղացիների գրավոր բողոքին, որով նրանք հայտնում են, որ իրենց ապրուստի միջոց տարածքները տրվել են Ադրբեջանին առանց իրենց հետ խորհրդակցելու և համաձայնություն ստանալու, Անդրկովկասյան Դաշնությունը պատասխանել է, որ սահմաններն արդեն գծված են, և դրանք վերջնական են:

Ըստ ԽՍՀՄ զինվորական քարտեզների՝ Սև լճի վրա Ադրբեջան-Հայաստանի սահմանն անցնում է լճի հյուսիսային ափին կից, այսպիսով լճի տարածքի ավելի քան 90 տոկոսը տալով Հայաստանին (պատկեր 19ա): Հայաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչներն այս սահմանը վավերացրել են և կնքել 1969 թ.:

Ներկայումս Ադրբեջանի զինվորները հայկական կողմին են ներկայացնում կեղծված քարտեզներ, որտեղ սահմանը ընդլայնված է հօգուտ իրենց՝ առանց նկատի ունենալու իրենց իսկ վավերացրած խորհրդային քարտեզները, որոնց,

ըստ 2020 թ., նոյեմբեր 9-ի եռակողմ հայտարարության, պետք է վերադառնային երկու կողմերը: (տե՛ս պատկեր 19բ):



Պատկեր 19ա↑, պատկեր 19բ ↓ Վերի քարտեզի սև գիծը Հայաստան-Ադրբեջան 1969 թ. վավերացված խորհրդային սահմանն է, իսկ ներքևի քարտեզում նշված կարմիր գիծը նորերս կեղծված քարտեզում է:



Եթե այսօր պետք է լինի նոր սահմանգծում, ապա ԽՍՀՄ-ի ժամանակներից ժառանգած մեր հայաստանյան սահմանները կարող են ծառայել որպես ժամանակավոր հիմք՝ Ադրբեջանին հանձնված տարածքներով ու այլ խնդիրներով հանդերձ: Սակայն երբ կողմերը համաձայնվում են սահմանագծում անցկացնելու, ապա դա նշանակում է որ առկա սահմանները վիճելի են և ենթակա են լրացուցիչ քննարկման: Քննարկումների ժամանակ, մեր կարծիքով, ճիշտ կլինի, որ հայկական կողմը վերջնական սահմանագծման համար հնարավոր հիմքը վերցնի 1920-ականներին նշված սահմանները, որոնք նման են պատկեր 20-ի քարտեզին, սակայն ունեն պաշտոնական վավերացում: 1923-29 թթ. գծագրված այս զինվորական քարտեզների օրինակներից Հայաստանը չունի, իսկ, ըստ մեզ հասած տեղեկությունների, Մոսկվան և Թբիլիսին, որտեղ դրանք պահպանվում են, մեզ օրինակներ չեն տրամադրում: Իսկ հնարավոր նոր սահմանագծման քննարկումների համար դրանք անհրաժեշտ են:

Ադրբեջանի որոշումը, որ իրենց սահմանները համարում են նախքան իրենց երկրի խորհրդայնացումը, հայկական կողմը պետք է օգտագործի ի շահ իրեն, քանի որ այդ տրամաբանությամբ Հայաստանին պետք է վերադարձվեն Նախիջևանը, Քաշաթաղը, Քարվաճառը որոնք 1921 թ. հանձնվեցին Ադրբեջանին, ինչպես նաև 1923-1936 թթ. միջակայքում ձևավորված բոլոր անկլավները և բռնագրաված տարածքները:

© Ռուբեն Գալչյան

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.դ Վ.Մ.Ավանեսյանը: